ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

<< 10>> << Հունվար >> 2017 թ N 4

ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՄԻՔԱՅԵԼ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ «ՀՈՐԲԱՏԵՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6, 1.16 կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 34-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի << Հորբատեղի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 28-ի N12/01 գրությունը, Միքայել Սարգսյանի հետ կնքած 2016 թվականի նոյեմբերի 1-ի N319 ժամկետային աշխատանքային պայմանագրի 6.1 կետի ա) ենթակետը և Միքայել Սարգսյանի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.2017 թվականի հունվարի 10-ից Միքայել Սարգսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի << Հորբատեղի հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ 5 /հինգ/ տարի ժամկետով:

2. 2017 թվականի հունվարի 10-ից լուծել Միքայել Սարգսյանի հետ կնքած 2016 թվականի նոյեմբերի 1-ի N319 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ